

Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2014թ-ի

երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների

10.12.2014թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Զոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝ Ժ.Մնացականյանը, հայփոստի աշխատակիցը, բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհին :

Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 75 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2014թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 225 տեղեկանք, ստացել 70 պաշտոնական նամակ մարգպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2014թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 1.969.000 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուհինը հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 80.000 (ութանասուն հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 990.000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

Կառավարության կողմից մեր համայնքին անհատույց հատկացված առվույտի և եզիպտացորենի սերմնացուները ամբողջությամբ ստացել և բաշխել ենք բնակիչներին:

Դեկտեմբերի 10-ի դրությամբ եկամտային մասով կազմում է 38.035.000 (երեսունութ միլիոն երեսունհինգ հազար) դրամ, տարեկանի կտրվածքով կատարվել է 90%:

2014թ երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների

1.Հողի հարկ – 4.850.000

2.Գույքահարկ –2.846.000

3.Տեղական տուրքեր –345.000

Դեկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսվում է հավաքել

1.Հողի հարկ – 250.000

2.Գույքահարկ –660.000

3.Տեղական տուրքեր –0

Համայնքի ղեկավար



Աբրահամյան